

ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐԸ ԵՒ ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՐՅԸ

Հայոց պատմա-հասարակական, գիտական, մշակութային եւ հոգեւոր կեանքի բազմաթիւ ոլորտներում յիրաւի վիթխարի է դերն ու նշանակութիւնն այն նուիրեալ անձանց, որոնք իրենց շարունակական եւ յաջորդային գործունէութեամբ երեք հարիւր տարի առաջ նախ Պոլսում հիմնեցին, ապա հաստատուեցին հայրենիքից հեռու, Ս. Ղազար փոքրիկ կղզեակում՝ յետագայում պտղաբեր նոր ոստեր արձակելով, եւ արդէն երեք դար է՝ իրենց իսկ ոյժերով գոյացրած այդ կղզեակ-պատառիկը կայ որպէս խոշոր մի կենտրոն, որպէս գիտական, մշակութային եւ հոգեւոր անպարսկակ, անպարագծելի մի տարածք թէ՛ հայրենիքից դուրս, թէ՛ հայրենիքում եւ թէ՛ ամէնուր, որտեղ հայ միտք ու հայ ոգի, ապա եւ ընդհանրապէս միտք ու ոգի կայ:

Խնկելի է նրանցից խոնարհուածների սրբազան յիշատակը, դրուատելի ու քաջալերիչ է իրենց արժանաւոր նախորդների հայրենապատումը այսօր էլ տքնաջան ու նուիրումով շարունակողների գործունէութիւնը, եւ այս գիտաժողովը եւս մի հաճելի ու յարմար առիթ է ոչ միայն նրանց ներկայութեանն ու ստեղծած արժէքներին վերստին հաղորդակցուելու, նրանց շունչն ու տրոփը զգալու, այլեւ կատարելու առանձին վերագնահատումներ, որոնց անհրաժեշտութիւնը արդէն ակնյայտ է դարձել:

Յատկապէս մշտական եւ անփոխարինելի է Մխիթարեանների ներդրումը հայագիտութեան եւ հայերէնագիտութեան բնագաւառում. այս փոքրիկ զեկուցման սահմաններում կը փորձեմ համառօտակի անդրադառնալ բարբառագիտութեան (որպէս հայերէնագիտութեան առանձին գիտաճիւղի) մէջ նրանց արածին, որովհետեւ առանց չափազանցութեան կարող ենք ասել, որ չէր կարող եւ չի կարող լինել քիչ թէ՛ շատ զարգացած հայերէնագի-

տուութիւն՝ առանց քիչ թէ շատ զարգացած բարբառագիտութեան: Այս դէպքում էլ յատկապէս կը ներկայացնեմ հայ բարբառների դասակարգման խնդիրը՝ տեսական եւ գործնական առաւել էական հարցերի հաշուառումով:

Հայ բարբառների վերաբերեալ առանձին կարեւոր դիտողութիւններ, դիտարկումներ, փաստեր ու հարցադրումներ կան Մխիթարեան տարբեր հեղինակների աշխատանքներում, որոնք մեր ունեցած հնարաւորութիւնների սահմաններում քաղուած եւ ներկայացուած են, բայց քանի որ ոչ միայն Մխիթարեան հեղինակների, այլեւ ամբողջ հայ բարբառագիտութեան համար իր ժամանակի գիտութեան առաւել ցայտուն, տիպական օրինակը Մխիթարեանների եւ հայ բանասիրութեան սիւններից մէկի՝ մեծավաստակ գիտնական Արսէն Այտընեանի լեզուագիտական ժառանգութիւնն է, քննութեան ոլորտ են ներառուած հիմնականում նրա հայեացքները, մասնաւորապէս՝ բարբառների դասակարգման նրա հայեցակարգը: Ըստ այդմ էլ զեկուցումը բովանդակուծ է երկու հիմնադրոյթ.

Ա) Այտընեանի՝ հայ քարտառների աշխարհագրական դասակարգումը:

Ի հարկէ, ունենալով շատ հին ակունքներ՝ հայ բարբառագիտութիւնն այսօր թեւակոխել է իր զարգացման մի նոր, բարձրագոյն փուլը, որը բնութագրուած է բարբառների բազմա-յատկանիչ դասակարգմամբ կամ բարբառային վիճակագրութեամբ: Ժամանակակից գիտութեան մակարդակին համապատասխան եւ նորագոյն մեթոդներով արուած, հնարաւորինս ամբողջական եւ ճշգրիտ չափանիշներ ապահովող այս դասակարգման հիմքում ակադեմիկոս Գ. Զահուկեանի «Հայ բարբառագիտութեան ներածութիւն» (Երեւան, 1972) հիմնարար աշխատութիւնն է, որը գիտական նուաճում է ոչ միայն հայ բարբառագիտութեան մէջ: Միւս կողմից, ընթացքի մէջ են Հայկական բարբառագիտական ատլասի կազմման աշխատանքները, եւ Ատլասի ստեղծումը կարող է ա) հայ բարբառագիտութեան մէջ մինչեւ այդ արուածի իւրատեսակ ամփոփումն ու ամբողջացումը լինել, բ) դառնալ հայ բարբառների վերաբերեալ տարատեսակ տուեալների շտեմարանը, գ) հիմք հանդիսանալ նորանոր ուսումնասի-

1674) աշխատութիւնը, ուր գրաբար ու աշխարհաբար հայերէններէ կողքին վուլգար հայերէն ընդհանուր անուանումը դիտարկուած են նաեւ առանձին բարբառային իրականութիւններ, որոնց ուսումնասիրութիւնը չի համարուած խրախուսելի, ո՛չ Շրոյլերի «Գանձ արամեան լեզուի» աշխատանքը (Ամստերդամ, 1711), ուր ոչ միայն տեղեկութիւններ կան Ագուլիսի, Ջուլայի, Թիֆլիսի, Ղարաբաղի, Վանի բարբառների մասին, այլեւ բարբառային խօսքի նմոշներ, ո՛չ Աստուածատուր Ներսեսովիչի եւ Յակոբ Վիլլոտի լատիներէն-անգլերէն բառարանները (1695, 1714), թէկուզ վերջինում արդէն բարբառային բառերը բերուած են համապատասխան նշումով, ո՛չ Շահան Ջրպետի քերականական աշխատութիւնը (Փրանսերէն, Փարիզ, 1823), ո՛չ Յովսէփ Արցախեցու գրաբար-նոր հայերէն բառարանը (Շուշի, 1830), ուր նաեւ բազմաթիւ բարբառային բառեր կան եւ այլն:

Այս հակիրճ թուարկումն իսկ միանգամայն բաւական է՝ համոզուելու համար, որ բարբառների ուսումնասիրութիւնն առայժմ առընչակցային բնոյթ ունի, այսինքն բարբառներին անդրադառնում են այլ կարգի իրողութիւնների առընչութեամբ, դրանց հետ կապուած տարբեր հանգամանքների առիթով (պատմական, իմաստասիրական, քերականական եւ այլն), գոնէ չկայ քննութեան ձեւաւորուած հայեցակարգ եւ ուսումնասիրութիւն շրջանակները սահմանափակուած են ա) կամ բարբառների գոյութեան վերաբերեալ ինչպէս ընդհանուր, այնպէս էլ մասնաւոր յիշատակումներով, բ) կամ բարբառային առանձին յատկանիշների եւ իրականութիւնների մատնանշումով, գ) կամ տարբեր բառարաններում բարբառային առանձին բառերի ընդգրկումով:

Իսկ Արսէն Այտընեանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» աշխատութեան երեւումով (Վիեննա, 1866) հայ բարբառների ուսումնասիրութիւնը յստակօրէն դառնում է դէպի գիտական հոլմ, այսինքն, կարելի է ասել, արդէն առկայ է ուսումնասիրութեան նիւթի, առարկայի եւ ուսումնասիրութեան սկզբունքների ու մեթոդների որոշակի փոխարարբերութեամբ գիտական կայուն մօտեցում, գծադրուած են գիտաճիւղային ուսումնասիրութեան բաւականաչափ համակարգուած դաշտն ու դրա դիտարկման ուղղութիւնները:

Բայց նախ՝ բարբառների դասակարգման մասին:

Դրանց համար կիրառելով հիմնական «գալառական» ա-նուանումը՝ իր կոթողային աշխատութեան տարբեր հատուած-ներ, իսկ «Նախաշաղի» ամբողջ մի գլուխը (իններորդը) Այտը-նեանը նուիրել է դրանց, որը փաստօրէն բարբառների ուսում-նասիրութեան նրա մեթոդի ու տեսութեան բանալին է, ի հար-կէ՝ զուգակցուած լեզուաբանական միւս ընդհանուր դրոյթների հետ (չմոռանանք, որ նրա հիմնական նպատակը աշխարհաբարի կամ նոր գրական հայերէնի ուսումնասիրութիւնն է), եւ այդ ծի-րի մէջ է, որ նա բարբախտաբար անդրադառնում է նաեւ գա-լառականներին: Վերջիններս կապելով նոր լեզուի, նաեւ ժողովր-դի տեղաշարժերի ու գաղթումների հետ եւ դրանց առատութիւ-նը դնելով յատկապէս «ստորին դարերէն ասդին» (15-19)՝ նա լե-զուի այդ անհամար ճիւղաւորութիւնները ամփոփում է հետե-ւեալ գլխաւոր խմբերում.

«Ա. միջին գո. Հայաստան. (Վան, Միջագետք եւն).

Բ. – Կոստանդնուպոլիս – Փոքր Ասիա.

Գ. արեւմտեան. Լեհաստան – Առտեալ.

Դ. արեւելեան. Աժտէրիսան – Պարսկաստան. որ կը ձգուի Ռուսաստանէն մինչեւ Հնդկաստան» (էջ 166):

Ապա կատարում է մի այլ խմբաւորում եւս՝ առաջին երե-քը համարելով արեւմտեան, իսկ վերջինը՝ արեւելեան. «երեքը քիչ շատ կը միաբանին իրարու, մի քան զմի հնազոյն կամ նո-րագոյն ձեւերով. միայն չորրորդը (արեւելեան գալառականը) անկախ մըն է միւսներէն»¹ (ն. տ.):

Իրեն յատուկ նուրբ դիտողականութեամբ Այտընեանը նախ նշում է այդ չորս գալառականների ընդհանրութիւնները, միա-ւորող գծերն ու յատկանիշները, յատկապէս՝ «ընդհանուր պար-զութիւն. համաձայնութեան հաստատ շարքն, եւ նշանակութիւն-զութիւն. համաձայնութեան հաստատ շարքն, եւ նշանակութիւն-ները հին ումի. համեմատ. աննախդիր հոլովներ. հին ապառնոյ ները հին ումի. համեմատ. աննախդիր հոլովներ. հին ապառնոյ ի սպառ բարձում. կու մասնիկ անհրաժեշտ անբաժին. ընդհան-րապէս բայերու եւ մանաւանդ կրաւորական շէնքը. սղունք եւ

¹ Այստեղ եւ միւս դէպքերում տեքստում յղում են միայն էջերի թուահա-մարները, որովհետեւ բոլոր քաղաածքները կատարում են հետեւեալ հրա-տարակութիւնից. ԱՐՄԵՆ ԱՅՏԸՆԵԱՆ, ՔԱՅԿԱՄԱՐԻ Քերականութիւն աշ-խարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Երեւան 1987:

ամփոփմունք՝ լեզուին կնիքն եղած. ըն վերջաւորութեանց զեղ-
չում» (էջ 167) եւ այլ իրողութիւններ: Այնուհետեւ Այտընեանը
առանձին-առանձին, ըստ խմբերի դիտարկում է դրանցից իւրա-
քանչիւրին բնորոշ առանձնայատկութիւնները, հնչիւնական, բա-
ռային, քերականական տիպական յատկանիշները, որը լեզուաբա-
նական-բարբառագիտական քննութեան աննախագէտ եւ օրինա-
կելի մի նմոյշ է: «Երկար եւ մանրահետ գործ» համարելով, թէ
չորս գաւառականներից որը որին ինչով է նմանում, ինչով
տարբերում, գրաբար կամ աշխարհաբար լեզուներից որին ին-
չով է յարում, այնուամենայնիւ հետազոտողն ունի նաեւ այդ հա-
մեմատութիւնների արդիւնքները, ըստ որոնց էլ սահմանում է
իւրաքանչիւր տեսակի հական նկարագիրը.

«Ա. ցեղ. Նախնեաց ռամկօրէնը՝ յատուկ կերպարանափոխու-
թիւններով:

Բ. ցեղ. Նոր լեզու, գրաբարի նմանագոյն՝ ըստ բառից կազ-
մութեան եւ ըստ ուղղագրութեան:

Գ. ցեղ. Հին ռամկօրէն՝ պարզագոյն, աղաւաղ հնչմունքնե-
րով:

Դ. ցեղ. Քերականութեամբ՝ հին եւ նոր հայերէններէ օ-
տար» (էջ 219):

Յատուկ նշում է, որ նոր հայերէնի երկու ճիւղերի հիմ-
քում ընկած են Բ(արեւմտեան) եւ Դ (արեւելեան) տեսակները:

Ա. Այտընեանի այս դասակարգումը, որի մասին տարբեր
ծաւալներով, առանձին մեկնութիւններով կամ առանց դրանց յի-
շատակում է բարբառագիտական յետադայ բազմաթիւ աշխա-
տութիւններում, բնութագրուած է որպէս աշխարհագրական
(տարածքային): Պահպանելով ընդունուած անուանումը՝ հարկ է
նկատի ունենալ երկու կարեւոր հանգամանք. ա) դա զուտ աշ-
խարհագրական դասակարգում չէ, բարբառային խմբերն առանձ-
նացում են ոչ միայն ըստ աշխարհագրական կամ տեղաշարժա-
յին գործօնների, այլեւ ըստ հնչիւնական, բառային, ձեւաբանա-
կան, շարահիսակական եւ այլ կարգի յատկանիշների, հաշուի են
առնում ինչպէս դրանց ընդհանրութիւնները, այնպէս էլ դրանց
տարբերակիչ գծերը. մի մօտեցում, որ այնուհետեւ հայ բարբա-
ռագիտութեան մէջ դարձաւ առանցքային, բ) դա միայն բար-
բառների դասակարգում չէ, անմիջականօրէն առնչում է հայ

բարբառագիտութեան (իբրեւ գիտաճիւղի) ձեւաւորման եւ զարգացման ընթացքին, ուստի գնահատումը այս տեսակէտից եւս պէտք է կատարուի: Այս առումով հարկ է անդրադառնալ մի հարցի եւս. մեր լեզուաբանական գրականութեան մէջ արդէն նկատուած է, որ լեզու - բարբառ - գաւառական եւ յարակից մի քանի եզրերի կիրառումը Այտընեանի կողմից միօրինակ չէ, դրանք վերջնականապէս չեն տարբերակուած, որ բարբառային խմբերի ներսում առանձին բարբառների բաւականաչափ յստակ տեղայնացումներ չեն կատարուած: Բայց որեւէ աշխատանքի արժէքը որոշողը դրանք չեն (դա գիտութեան բնականոն զարգացման հարց է). կարեւորը այն տեսութիւնն է, քննութեան այն հայեցակարգը, որը մշակուած է ոչ միայն իր ժամանակի մէջ, այլեւ շատ հարցերում կանգնած է գիտական այսօրուայ համար էլ բարձր մակարդակի վրայ, եւ ինչպէս նշում է Գ. Զահուկեանը իր «Ընդհանուր եւ հայ լեզուաբանութիւն» (ռուսերէն, Երեւան, 1978, էջ 324) աշխատութեան մէջ՝ «Նա գերազանց գիտէր հին հայերէն լեզուն, կանգնած էր լեզուաբանական գիտութեան նուաճումների մակարդակին եւ տիրապետելով լեզուաբան-հետազոտողի անուրանալի որակների՝ շատ բաներում կանխորոշեց յետագայ խոշոր լեզուաբանների առանձին դրոյթները ու մտքերը»: Այդ կապակցութեամբ էլ, ի բաց առնելով Այտընեանի լեզուաբանական քննութեան հայեցակարգի հանգամանալից վերլուծութիւնը (որի հնարաւորութիւնն ու ժամանակը այս դէպքում չունենք)², խիստ համառօտ անդրադառնանք նրա՝ բարբառների ուսումնասիրութեան բնագաւառում առաջադրած եւ կիրառած սկզբունքներին ու դրոյթներին, որոնք նոյնպէս, ի թիւս նախորդ ասուածների, բարբառագիտութեան յետագայ ընթացքի համար դարձան անբաժանելի ու հիմնարար իրողութիւններ: Նշենք մի քանիսը:

1) Պատմական հայեցակէտի անհրաժեշտութիւն. լեզուն սերտօրէն կապուած է հանրութեան պահմութեան հետ, աւելին՝

2 Հետաքրքրողներին յղում ենք Ա. Ս. Աբրահամեանի «Արւես Այտընեանի լեզուաբանական հայեացքները» (Ե., 1984) աշխատութիւնը, որում ոչ մի լեզուաբանական հայեացքներ չեն ներկայացուած, որոնք չեն ընդհանուր լեզուաբանական հայեացքներ, այլեւ ներկայացուած են դրանց վերաբերեալ եղած կարծիքներն ու գնահատականները:

այն «իւր յառաջադիմութեան, անկման ու վերանորոգութեան վիճակներովը անվրէպ ծանրաչափ մը կ'ըլլայ՝ մարդկութեան փոփոխմանցը մէջ ազդի մը նիւթական, բարոյական եւ գլխաւորաբար մտաւորական կենացը յաջող կամ անյաջող վիճակին: Եւ սա է լեզուի՝ մը պատմական նշանակութիւնը: Ուստի ինչպէս ամէն պատմութիւն՝ նոյնպէս այս մասնական (լեզուի) պատմութիւնը՝ պատճառախնդիր համեմատութեանց արժանի է՝ թէ իւր անցելոյն, թէ ներկային եւ թէ մանաւանդ ապագային համար (էջ 26): Դիտել տալով, որ լեզուն նոյնպէս բնականօրէն անցնում է «ծնանիլ - ապրիլ - իւր նմանը յառաջ բերել - մեռնիլ» փուլերով, եւ այդ անցումները կատարւում են տեւականօրէն, աստիճանաբար, առանց ոստիւնների՝ Այտընեանը լեզուի եւ նրա ամէն մի ճիւղաւորման (այդ թւում՝ նաեւ բարբառների) մէջ կատարուող փոփոխութիւնները պահանջ է դնում ուսումնասիրել հէնց իրենց պատմական զարգացման ընթացքի մէջ՝ պահպանելով ինչպէս ընդգրկման ամբողջականութիւն, այնպէս էլ ժամանակագրական հնարաւոր ճշտութիւն:

2) Համեմատութիւնների արդիւնաւէտ կիրառութիւն. ընդ որում, համեմատութեան եզրեր կարող են լինել ոչ միայն նոյն լեզուի գոյութեան տարբեր ձեւերն ու փուլերը, այլեւ տարբեր լեզուների համանման երեւոյթները:

3) Լեզուի հասարակական, ոճական եւ տարածքային տարբերակների փոխյարաբերութեան հաշուառում. լայն առումով դնելով հասարակական-ոճական շերտերի հարցը («Աւագանւոյ կամ Ազատաց լեզու, ուսումնական կամ Գիտնոց լեզու, Հասարակ կամ Ընտանեկան լեզու, Գոհհիկ կամ Գեղջկաց լեզու» էջ 34), Այտընեանը լեզուի միասնականութեան խախտման եւ առանձին ճիւղ առաջացնելու տեսակէտից յատկապէս շեշտում է տարածքային տարբերակների (բարբառների) դերն ու մեծ ազդեցութիւնը: Իսկ ընդհանրապէս, այդ բոլոր տարբերակները դիտարկւում են իրենց ամբողջութեան ու փոխկապակցութեան մէջ:

4) Գրական լեզուների եւ բարբառների փոխյարաբերութեան խնդիրը. այս առումով արժարժուած բազմաբնոյթ ու բազմաշերտ հարցերի չրջանակից առանձնացնենք յատկապէս երկուսը. ա) դեռեւս գրաբարի կողքին բարբառների առկայութեան ու գոյութեան փաստը, որ Այտընեանից տասնեակ տարիներ յե-

տոյ էլ վէճերի ու տարակարծութիւնների առարկայ էր եւ վերջնականապէս լուծուեց միայն մեր օրերում՝ Զահուկեանի կողմից, Այտընեանի աշխատանքում թէ՛ տեսական, թէ՛ գործնական առումներով ճիշտ ուղղութեամբ են դիտարկուած: Փաստելով, որ «չունինք ոչ Յունաց վիմաքանդակ դաշնագրութիւններն ու արձանագրութիւնները, ոչ Հռոմոց պղնձի տախտակները, որ կարենան հնագոյն լեզուին կերպարանքն ու աստիճանաւորութիւնն աչքի տակ բերել, երիցագոյն կամ կրտսերագոյն ձեւերով ժամանակագրութիւնը գաւառականներովը մէկտեղ երեւցընել, եւ այլն: Ուստի հարկ է ուրիշ աղբիւրներ փնտռել» (էջ 42), նա ընդամէնը մի քանի տող յետոյ գրում է. «Հայաստանի պէս ընդարձակ երկրի մը բազմաթիւ գաւառներուն մէջ հին ժամանակները քանի մը այլակերպ բարբառներ գործածուելն այնչափ բնական էր, որ եթէ գրաւոր վկայութիւններն ալ լռէին՝ լոկ մակաբերութիւնը դեռ կարժէր» (էջ 43): Եւ, ի հարկէ, տքնաշան հաւաքողի իր հետեւողականութեամբ նա բերում է նաեւ փաստեր: Բ) Իսկ ինչ հետեւողականութեամբ նա բերում է նաեւ փաստեր: Բ) Իսկ ինչ վերաբերում է արեւելահայ եւ արեւմտահայ գրական լեզուների բարբառային հիմքերին, Այտընեանը դրանք ոչ թէ յանգեցնում է ուղղակի Պոլսի եւ Արարատեան բարբառներին, այլ դրանց հիմքի վրայ ածած խօսակցական լեզուներին:

Անշուշտ, կարելի է դեռ շարունակել հարցերի թուարկումը՝ ներառելով նոր դրոյթներ բարբառների տարածական բաշխուածութեան, բարբառային փոխադրեցութիւնների, այլ լեզուների հետ ունեցած շփումների, փոխառութիւնների բնոյթի եւ այլնի վերաբերեալ, բայց եզրակացութիւնը լինելու է նոյնը. բարբառների ուսումնասիրութեան ընթացքի մէջ սկսուել է մի նոր փուլ, առաջացել է, գոյացել է բոլորովին նոր մի որակ: Ուստի եւ անցնենք յաջորդ հիմնադրոյթին:

Բ) Հայ բարբառների ուսումնասիրութեան փուլերի հարցը:

Հայ բարբառների ուսումնասիրութեան պատմութեան լաւագոյն պարբերացումը կատարել է Գ. Զահուկեանը՝ առանձնացնելով հետեւեալ փուլերը.

1) Բարբառների առանձնակի նկարագրութեան եւ աշխարհագրական (տարածքային) դասակարգման փորձերի չըջան (5-րդից մինչեւ ի դարի սկիզբը):

2) Զեւաբանական դասակարգման սկզբունքի առաջնային եւ տիրապետութեան շրջան (ի դ. սկզբներից մինչեւ 40-ական թուականների սկիզբը): Այս շրջանը բնութագրուում է Հ. Աճառեանի գործունէութեամբ եւ նրա կատարած ձեւաբանական դասակարգմամբ՝ -ՈՒՄ, Կ, ԵՀ, ճիւղերի առանձնացումով, ապա եւ Ա. Ղարիբեանի կողմից (1939) մի նոր՝ Ս ճիւղի առանձնացմամբ:

3) Հնչիւնաբանական դասակարգման սկզբունքի առաջնային եւ ձեւաբանական դասակարգման յետագայ ճշգրտման ու մանրամասնման շրջան (40-ականների սկզբից մինչեւ 70-ականների սկիզբը): Այս շրջանն էլ բնութագրուում է Ա. Ղարիբեանի 1941 եւ 1953 թթ. առաջնացած հնչիւնաբանական դասակարգումով՝ նկատի ունենալով գրաբարի բաղաձայնական համակարգի, յատկապէս ձայնեղ եւ խուլ պայթականների ու կիսաշփականների՝ բարբառներում կրած փոփոխութիւնները: Այս շրջանին է վերաբերում նաեւ է. Աղայեանի (1954) ձեւաբանական-տիպաբանական դասակարգումը:

4) Բազմայատկանիչ դասակարգման սկզբունքի առաջնային եւ բարբառագիտական նախապատրաստման շրջան, որը բնութագրուում է միանգամայն նոր մօտեցմամբ ու մեթոդներով՝ արուած Գ. Զահուկեանի կողմից, որի մասին արդէն նշուել է: Աւելացնենք միայն, որ համաժամանակեայ դասակարգման համար առանձնացուում են 100 (50 հնչիւնական, 50 քերականական-ձեւաբանական) զուգաբանութիւններ (յատկանիչներ), որոնք դիտարկուում են միասնաբար, իսկ բառային տարբերութիւնները, ըստ առանձնացուող հիմնական քանակութեան, դիտարկուում են առանձին՝ մեթոդը որակելով որպէս բառաաշխարհագրութիւն եւ բառավիճակագրութիւն: Նոյն աշխատութեան երկրորդ մասում (որ անուանուած է «Տարժամանակեայ բարբառագիտութեան հարցեր») համապատասխան մեթոդների կիրառումով կատարուում է Ե դարի բարբառների բազմայատկանիչ դասակարգումը, վերլուծուում է գրական լեզուների եւ բարբառների փոխարարբերութիւնը հայոց լեզուի զարգացման տարբեր շրջաններում, քննուում են պատմական բառավիճակագրութեան եւ բարբառային ժամանակագրութեան հանգուցահարցերը, բացատրուում եւ դիտարկուում են բարբառների հնչիւնա-քերականական եւ բառային հնաբանութիւնները:

Այս չորս շրջանները հայ բարբառագիտութեան մէջ ընդունուած է անուանել նաեւ բարբառների ոչ-գիտածիւղային (Ե-ի դ. սկ.) եւ գիտածիւղային ուսումնասիրութեան փուլեր:

Կատարուած շրջանաբաժանումները որքան էլ ճիշտ են արտացոլում հայ բարբառների ուսումնասիրութեան փուլերը՝ իրենց ընդհանուր ուղղուածութեամբ, բնորոշ յատկանիշներով, մեթոդներով, քննութեան հայեցակէտերով ու այլ առանձնայատկութիւններով, այնուամենայնիւ նկատուում է մի փոքր համահարթեցում. ԺԺ դարի կէսերից մինչեւ Ի դարի սկիզբն ընկած ժամանակահատուածը, որ արդէն ինչպէս տեսանք, բոլորովին նոր մի որակ է, հաւասարարժէքօրէն չի տեղաւորուում ոչ նախորդ շրջանի մէջ (այսինքն՝ բարբառների առանձնակի նկարագրութեան եւ աշխարհագրական դասակարգման փորձերի, առաւել եւս՝ ոչ-գիտաճիւղային որակուածի), ոչ էլ յաջորդի (այսինքն՝ ձեւաբանական դասակարգման սկզբունքի առաջնայան եւ տիրապետութեան շրջանի): Այս դէպքում պէտք է նկատի ունենալ նաեւ, որ ա) նշուած ենթաշրջանը բնութագրուում է ինչպէս՝ գիտաճիւղային ուսումնասիրութեան հիմունքների ձեւաւորմամբ, այնպէս էլ Այտրենեանի աշխարհագրական դասակարգմամբ ու ձեւաբանական դասակարգման հիմնահարցերի նախնական առաջադրմամբ, բ) նշուած ժամանակաշրջանում Այտրենեանի հետ եւ Նրանից յետոյ հանդէս եկան այնպիսի հեղինակներ, ինչպիսիք են Փ. Պատկանեանը, Լ. Մսերեանցը, Յ. Եանուշը, Ս. Սարգսեանցը, Ա. Տոմսոնը եւ ուրիշներ, վերջապէս հէնց ինքը՝ Հ. Աճառեանը, որ 1898, 1899 եւ 1901 թթ. բարբառագիտական աշխատանքներ գրեց Ասլանբէկի, Սուչաւայի եւ Ղարաբաղի բարբառների մասին, գ) պարբերացման մէջ կարեւոր տեղ պէտք է յատկացնել ոչ միայն բարբառների դասակարգման սկզբունքներին, այլեւ բարբառագիտութեան (իբրեւ գիտաճիւղի) զարգացման ու կայացման ընթացքի մէջ որակական նոր փուլեր պայմանաւորող սկզբունքներին ու մեթոդներին:

Ամբողջ ասուածից ակնյայտ է դառնում, որ անհրաժեշտ է կատարել ժամանակագրական մի փոքր տեղաշարժ եւ նշուած ժամանակահատուածը ներառել շրջանաբաժանման առկայ համա-կարգի մէջ հետեւեալ կերպ. նախ առանձնացնել երկու մեծ շրջաններ՝ ա) առընչակցային կամ ոչ-գիտածիւղային ուսումնա-սիրութեան, բարբառների առանձնակի նկարագրութեան շրջան՝

Ե-ԺԹ դարի կէսերը եւ բ) գիտաճիւղային՝ ԺԹ դ. կէսերից մինչեւ մեր օրերը: Իսկ վերջինս էլ իր հերթին բաժանել հետեւեալ ենթաշրջանների. ա) գիտաճիւղային ուսումնասիրութեան հիմունքների ձեւաւորման, աշխարհագրական դասակարգման եւ ձեւաբանական դասակարգման սկզբունքի նախնական առաջընթացի շրջան՝ ԺԹ դ. կէսերից մինչեւ ի դարի 10-ական թուականները (նկատի ունենալով Հ. Աճառեանի 1909-ին Փարիզում ֆրանսերէն լեզուով տպագրուած «Հայ բարբառների դասակարգումը» եւ 1911-ին՝ «Հայ բարբառագիտութիւն. ուրուագիծ եւ դասաւորութիւն հայ բարբառների (Մոսկվա-Նոր Նախիջեւան) աշխատութիւնների երեւան գալը), բ) գիտաճիւղային ուսումնասիրութեան ամրակայման, ձեւաբանական դասակարգման տիրապետութեան շրջան՝ ի դարի առաջին տասնամեակի վերջերից մինչեւ 40-ական թուականների սկիզբը: Յաջորդ շրջանները մնում են անփոփոխ:

Այսպէս աւելի ամբողջական ու ներդաշնակ է արտացոլւում առանձնացուող իւրաքանչիւր շրջանի ժամանակագրական սահմանների եւ դրանց բնութագրական յատկանիշների, արժէքների փոխյարաբերութիւնը:

ՆՈՒԷՐ ՍԱՐԳՍԵԱՆ